ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5, հեռ. (+374 10) 511-722

« 16 » մայիսի 2019թ.

Հ-3867

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության գերակայության սկզբունքի հետևողական կենսագործումն ապահովում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, որի որոշումները մշտապես կարևոր դերակատարություն են ունեցել Սահմանադրության կայունության ու զարգացման ապահովման, սահմանադրական արժեքների արմատավորման, միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման գործում՝ պայմանավորելով դրանց ուրույն տեղն իրավահամակարգում:

Հիմնական օրենքը Սահմանադրական դատարանին վերապահել է սահմանադրական արդարադատություն իրականացնելու, իսկ Վճռաբեկ դատարանին՝ հիմնարար խախտումները վերացնելու, ինչպես նաև օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու եղանակով արդարադատություն իրականացնելու առաքելություն: Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների կողմից օրենքների մեկնաբանության գործառութային սահմանները կանխորոշող ելակետային չափանիշը հենց այդ առաքելությունն է:

Ունենալով իրավասությունների՝ սահմանադրորեն հստակ ամրագրված շրջանակ, պետական իշխանության մարմիններն իրենց գործառույթները պետք է իրացնեն այնպես, որ հարգանք դրսևորվի միմյանց լիազորությունների ու նաև հեղինակության նկատմամբ: Մինչդեռ Սահմանադրական դատարանի՝ Վաչագան Ղազարյանի դիմումի հիման վրա 2019 թվականի ապրիլի 16-ի թիվ ՍԴՈ-1453 և

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ
Մ-6788
17.05.2019թ.

Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշումներում տեղ գտած գնահատականները, որտեղ մի դեպքում Վճռաբեկ դատարանի հայեցողական լիազորության իրացումը որակվել է որպես ***կամայականություն***, իսկ մեկ այլ դեպքում, բարձրագույն դատական ատյանի (բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի) գործունեության հիմնական ուղղության՝ օրենքի միատեսակ կիրառության և իրավունքի զարգացման ապահովման գործառույթի իրագործումը՝ լիազորությունների ըստ էության վերազանցում, խարխլում են դատական իշխանության երկու մարմինների միջև օրենքի մեկնաբանության ոլորտային սահմանները՝ վտանգելով գործառութային տարանջատման սկզբունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը, ՀՀ բարձրագույն դատական խորհրդից՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող մարմնից ակնկալում է համարժեք արձագանք:

Միաժամանակ, հաշվի առնելով հանրային հետաքրքրությունը, ինչպես նաև այն, որ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ քրեական գործով նախաքննությունն ավարտվել է և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է առաջին ատյանի դատարան, միջնորդում ենք քննարկել ինչպես սույն հայտարարությունը, այնպես էլ դռնփակ դատական նիստում քննված՝ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը դատական իշխանության պաշտոնական կայքէջում տեղադրելու հարցը՝ հրապարակային դարձնելով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Ս.ՕՀԱՆՅԱՆ